ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Կենսաբազմազանության պահպանման ու կայուն օգտագործման մի շարք գործողություններ բխում են Կենսաբազմազանության կոնվենցիայի Կունմինգ-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակից (GBF), որն ընդունվել է 2022թ.: Այս փաստաթղթի գլոբալ նպատակն է մինչև 2030 թվականը կենսաբազմազանության կորստի կասեցման և այդ կորուստը շրջադարձային դարձնելու համար ձեռնարկված ծրագիր:

Կունմինգ-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակն համաձայնագիրը ընդգրկում է 23 պահպանման ուղղություն, որոնցից 1-8-ն ուղղված են Երկրի կենսաբազմազանության առջև ծառացած սպառնալիքների կրճատմանը, 9-13-ը՝ մարդկանց կարիքների բավարարմանը և կենսաբազմազանության կայուն օգտագործումը ձևավորվող օգուտների բաշխման միջոցով, 14-23-ն ուղղված են իրականացման և ներդրման գործիքներին և լուծումներին:

Կունմինգ-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի 3-րդ թիրախի համաձայն մինչև 2030 թվականը պետք է ապահովվի Երկիր մոլորակի ցամաքային և քաղցրահամ ջրային էկոհամակարգերի առնվազն 30%-ի արդյունավետ պահպանումը, ընդ որում՝ ուրաքանչյուր երկիր ևս պետք է ապահովի իր տարածքի 30%-ի պահպանությունը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը (ԲՀՊՏ) կազմում են 386,355 հա, կամ հանրապետության ընդհանուր տարածքի 13%-ը: 2012 թվականից ի վեր ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսն ավելացել է 88,600 հեկտարով (3%):

Հայաստանում գործում են՝

- *3 պետական արգելոց*
- *4 ազգային պարկ*
- *27 պետական արգելավայր*
- *233 բնության հուշարձան:*

Երկրի բուսական և կենդանական աշխարհին կարևոր կենսավայրերի ընդհանուր տարածքի մոտ 60 %-ն ընդգրկված է տարբեր կարգավիճակ ունեցող ԲՀՊՏ-ներում:

30%-ի պահպանության նպատակին հասնելու հնարավորությունները

հետևյալն են.

ԲՀՊՏ-ների կանխատեսվող տարածքը մինչև 2030թ. կկազմի 396,155 հա, կամ երկրի ընդհանուր տարածքի 13.3%-ը Տաթևի և Ջերմուկի ազգային պարկերի ստեղծման հաշվին, որոնք կավելացնեն ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը 9,800 հա-ով: Արդյունքում 2030թ. Հայաստանում կգործեն.

- *3 պետական արգելոց*
- *6 ազգային պարկ,*
- *23 պետական արգելավայր*
- *233 բնության հուշարձան:*

Հայաստանի տարածքի 30%-ի պահպանության հասնելու միջոցառումները սահմանված են ՀՀ կենսաբանական բազմազանության 2025-2030 թվականների գործողությունների ազգային ծրագիր» նախագծում: Ըստ այդմ, Հայաստանը նախատեսում է.

- *Ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցը՝ առնվազն հասցնելով ՀՀ տարածքի 16,6%-ի:*
- *Վերանայել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը՝ ապահովելով համայնքների և մասնավոր պահպանվող տարածքների, այլ արդյունավետ տարածքային բնապահպանական միջոցառումների (OECM), միկրոարգելոցների և էկոցանցի ստեղծումը և արդյունավետ կառավարումը:*
- *Ապահովել ՀՀ տարածքի առնվազն 13,3%-ի պահպանությունն այլ արդյունավետ տարածքային բնապահպանական միջոցառումների (OECM) միջոցով:*
- *Ստեղծել առնվազն 1 կենսոլորտային պահպանավայր (տարածք) և առաջադրել այն ՄԱԿ կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) «Մարդը և կենսոլորտը» ծրագրի հաստատմանը:*